30
ՀՈՒՆԻՍԻ
2020

Luys Lnyu®

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2017 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2017 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ԱԼԳ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ ..2

2. ԱԼԳ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ. 8

3. ՎԻԶԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ 13

4. ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ. 14

5. ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ. 16

6. ԱՅԼ ՈՒՇԱԳՐԱՎ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական Խորհրդարանը հունիսի 19-ին հաստատեց 2020թ. Արևելյան գործընկերության գագաթնաժողովին ընդառաջ Եվրոպական Խորհրդին, Հանձնաժողովին և Հանձնաժողովի փոխնախագահ-արտաքին և անվտանգության քաղաքականության հարցերով գլխավոր հանձնակատարին ուղղված հանձնարարականների փաստաթուղթը[1]: Փաստաթուղթը կարևոր է այնքանով, որքանով ԵՄ-ի համար ԱԼԳ գործընկերների հետ հարաբերությունների հետագա զարգացման հստակ քաղաքական ուղենիշներ է սահմանում:

Եվրոպական Խորհրդարանը հանձնարարականների նմանատիպ փաթեթ[2] էր ներկայացրել նաև 2017թ. նոյեմբերին տեղի ունեցած Արևելյան գործընկերության հերթական գագաթնաժողովին ընդառաջ: Ուշագրավ է, որ ինչպես 2017թ. փաստաթղթում, այնպես էլ ներկայումս քննարկվող տարբերակում անդրադարձ է կատարվում Հայաստանին ուղղակիորեն և անուղղակիորեն առնչվող մի շարք առանցքային խնդիրների, ուստի կարևոր է համեմատել երկու փաստաթղթերը՝ հասկանալու համար, թե վերջին երեք տարվա ընթացքում ինչպիսի փոփոխությունների են ենթարկվել այդ խնդիրների վերաբերյալ ԵՄ պաշտոնական մոտեցումները:

Սույն վերլուծությամբ փորձել ենք համեմատել Հայաստանի համար հետաքրքրություն ներկայացնող տարբեր հարցերին վերաբերող մեջբերումները համապատասխանաբար 2017 և 2020 թվականների փաստաթղթերից: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք հարցերի վերաբերյալ ԵՄ մոտեցումները 2017թ. փաստաթղթի համեմատ բացասական փոփոխությունների են ենթարկվել: Հատկապես մտահոգիչ են 2020-ին հաստատված փաստաթղթում Արցախյան հակամարտության և առհասարակ ԱԼԳ տարածքում առկա հակամարտությունների մասով տրված գնահատականները: Ի տարբերություն 2017թ. փաստաթղթում տեղ գտած բավական օբյեկտիվ և հավասարակշռված ձևակերպումների՝ նոր փաստաթուղթը պարունակում է բազմաթիվ մտահոգիչ տարրեր, որոնք կարող են ոչ

[1] European Parliament recommendation of 19 June 2020 to the Council, the Commission and the Vice-President of the Commission / High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy on the Eastern Partnership, in the run-up to the June 2020 Summit, 19.06.2020, https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2020-0167_EN.html (այցելվել է 26.06.2020թ.):

[2] European Parliament recommendation of 15 November 2017 to the Council, the Commission and the EEAS on the Eastern Partnership, in the run-up to the November 2017 Summit, 15.11.2017, https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2017-0440_EN.html (այցելվել է 26.06.2020թ.):

հայանպաստ մեկնաբանությունների և Ադրբեջանի կողմից շահարկումների առիթ դառնալ:

1. ԱԼԳ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Նախ անդրադառնանք այն մեջբերումներին, որոնք վերաբերում են ԱԼԳ տարածաշրջանի հակամարտություններին, մասնավորապես՝ Արցախյան հակամարտությանը: Արցախյան հակամարտությանը 2020թ. բանաձևում անդրադարձ է կատարվում «Անվտանգություն, կայունություն, **տարածքային ամբողջականություն** և կոնֆլիկտների կարգավորում» ենթավերնագրի ներքո: 2017-ին Արցախյան հակամարտությանը անդրադարձ էր կատարվում «Արևելյան գործընկերության ապագան» ենթավերնագրի ներքո: Այսինքն՝ ի սկզբանե Արցախյան հակամարտությունը դիտարկվում է տարածքային ամբողջականության սկզբունքի լույսի ներքո: Ընդհանրապես, ամբողջ փաստաթղթում կարմիր թելի պես անցնում է տարածքային ամբողջականության սկզբունքը, մինչդեռ տարբեր հակամարտությունների տարանջատման մասին ոչ մի խոսք չկա:

Մեջբերում 2020թ. փաստաթղթից	Մեջբերում 2017թ. փաստաթղթից
Քանի որ ԱԼԳ երկրների **անկախությունը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը դեռևս խախտված են չլուծված տարածաշրջանային հակամարտությունների, արտաքին ագրեսիայի և որոշ երկրների տարածքների շարունակվող օկուպացիայի պատճառով,** ինչը խարխլում է մարդու իրավունքների հետ կապված իրավիճակը, խոչընդոտ է հանդիսանում ԱԼԳ-ի բարգավաճման, կայունության և աճի համար, սահմանափակում է ԵՄ գործողությունները՝ դրանով իսկ վտանգելով ԱԼԳ նախագիծը: **Այդ հակամարտությունների մեծ մասում**	Քանի որ ԵՄ արևելյան գործընկերների **անկախությունը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը շարունակում են մնալ սպառնալիքի ներքո՝ չկարգավորված տարածաշրջանային հակամարտությունների պատճառով, ներառյալ նրանք, որոնք նախաձեռնվել են և առայժմ ակտիվորեն պահպանվում են Ռուսաստանի Դաշնության կողմից՝** հակառակ միջազգային իրավական կարգը պահպանելու վերջինիս ստանձնած միջազգային պարտավորություններին: Քանի որ ԵՄ-ն պետք է ավելի ակտիվ դեր խաղա իր հարևանությամբ շարունակվող բոլոր

Ռուսաստանը ակտիվ դեր է խաղում՝ որպես ագրեսոր, իր հիբրիդային պատերազմի, ապօրինի օկուպացման և բռնակցման քաղաքականության, կիբեռհարձակումների, քարոզչության և ապատեղեկատվության միջոցով, որոնք սպառնում են ընդհանուր առմամբ եվրոպական անվտանգությանը.	հակամարտությունների խաղաղ կարգավորման գործում, քանի որ Ռուսաստանի ագրեսիան Ուկրաինայի նկատմամբ, Ղրիմի թերակղզու բռնակցումը և վրացական երկու շրջանների շարունակական օկուպացիան, ինչպես նաև Ռուսաստանի հիբրիդային սպառնալիքները, ներառյալ ապակայունացման գործողությունները և քարոզչությունը, ընդհանուր առմամբ սպառնում են եվրոպական անվտանգությանը:
Մեկնաբանություն ***Եթե 2017թ. տեքստում ԱԼԳ անդամ որոշ երկրների տարածքների օկուպացիայի հարցում ուղղակիորեն հիշատակվում էր Ռուսաստանը, ապա 2020թ. տեքստում ընդհանուր անդրադարձ է կատարվում՝ «արտաքին ագրեսիայի և որոշ երկրների տարածքների շարունակվող օկուպացիային», և միայն հետո է նշվում, որ «այդ հակամարտությունների մեծ մասում Ռուսաստանը ակտիվ դեր է խաղում՝ որպես ագրեսոր»: Այս մեջբերումը կարող է Ադրբեջանի կողմից շահարկման առարկա դառնալ և օգտագործվել հերթական անգամ Հայաստանին որպես օկուպանտ ներկայացնելու նպատակով:***	
Քանի որ Եվրախորհրդարանը դատապարտում է ԱԼԳ երկրների ինքնիշխանության և տարածքային ամբողջականության խախտումը, չի ճանաչում նրանց սահմաններում բռնի փոփոխությունները և տարածքների բռնակցման փորձերը և **մերժում է ուժի կամ ուժի սպառնալիքի օգտագործումը՝ կիսելով ԵՄ հանձնառությունը՝ պաշտպանել հակամարտության խաղաղ**	Համանման մեջբերումը բացակայում է:

կարգավորումը դիվանագիտական միջոցներով և միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին համապատասխան, համաձայն ՄԱԿ-ի կանոնադրությանը և Հելսինկյան եզրափակիչ ակտին, մասնավորապես այն հակամարտությունների պարագայում, որին կողմ է հանդիսանում Ռուսաստանը:	
Մեկնաբանություն ***Ուշագրավ է, որ այս հատվածում, անդրադառնալով ԱԼԳ տարածաշրջանում առկա հակամարտություններին՝ ուժի կամ ուժի սպառնալիքի օգտագործման մերժումը կապվում է կոնկրետ այն հակամարտությունների հետ, որտեղ Ռուսաստանը հանդիսանում է հակամարտության կողմ, ինչը Ադրբեջանի կողմից կարող է մեկնաբանվել որպես իր հանդեպ բացառության դրսևորում: Սա կարող է Ադրբեջանի կողմից օգտագործվել որպես ռազմական սադրանք հրահրելու փաստարկ, մանավանդ, որ դրան նպաստող այլ ձևակերպումներ ևս առկա են նշված փաստաթղթում, որին ստորև կանդրադառնանք:***	
Կոչ անել՝ **օտարերկրյա զորքերը անհապաղ դուրս բերել օկուպացված բոլոր տարածքներից և վերջ տալ ռազմական գործողություններին**, որոնք անհարկի խլում են քաղաքացիական և զինվորական կյանքներ՝ խոչընդոտելով սոցիալ-տնտեսական զարգացումը, և **թույլ տալ հարյուր-հազարավոր ներքին տեղահանված անձանց (IDP) վերադառնալ իրենց հայրենիք**: Շարունակել նպաստել հակամարտությունների կարգավորմանը նպաստող միջավայրին և աջակցել գործողություններին, որոնք	Կոչ անել՝ **անհապաղ դադարեցնել հայկական և ադրբեջանական զորքերի միջև ռազմական գործողությունները**, որոնք անտեղիորեն խլում են խաղաղ բնակիչների և զինվորների կյանքը, միաժամանակ խոչընդոտում են սոցիալ-տնտեսական զարգացմանը: **Վերահաստատել աջակցությունը ղարաբաղյան հիմնախնդիրը լուծելու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին և 2009 թվականի հիմնարար սկզբունքներին, որոնք ներառում են տարածքային ամբողջականությունը,**

նպաստում են վստահությանը և հակամարտությունների արդյունքում բաժանված համայնքներում մարդկանց միջև շփումների անցկացմանը: **Վերահաստատել աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ կարգավորելու Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, և 2009թ. հիմնարար սկզբունքներին՝ միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, ՄԱԿ-ի Կանոնադրության և ԵԱՀԿ 1975թ. Հելսինկյան Եզրափակիչ Ակտի հիման վրա լուծման հասնելու մտայնությամբ:** Խրախուսել բոլոր կողմերին **ինտենսիվացնել երկխոսությունը և զերծ մնալ ռազմաշունչ հռետորաբանությունից, որը կարող վտանգել կարգավորման ցանկացած հեռանկար:**	**ինքնորոշումը և ուժի չկիրառումը:** Կոչ անել Հայաստանին և Ադրբեջանին՝ վերսկսել բանակցությունները՝ բարեխղճորեն նպատակ ունենալով կյանքի կոչել այդ սկզբունքները՝ հակամարտության լուծման նպատակով, որը **հնարավոր չէ լուծել ռազմական ուժի կիրառմամբ**: Կոչ անել Հայաստանի և Ադրբեջանի Կառավարություններին բարձր մակարդակի բանակցություններ վարել և **հաստատել վստահության ամրապնդման իրական միջոցների և հայ և ադրբեջանական քաղաքացիական հասարակության միջև երկխոսության հանձնառությունը**: **ԵՄ-ի և Կողմերից յուրաքանչյուրի միջև նոր համաձայնագրերի վավերացումը պայմանավորել ստանձնած պարտավորությունների և հակամարտության լուծման ուղղությամբ էական առաջընթացի հետ, ինչպես, օրինակ, հրադադարի պահպանումն է և աջակցությունը 2009 թվականի հիմնական սկզբունքների կատարմանը:**

Մեկնաբանություն

Եթե 2017թ. տեքստում անդրադառնալով բուն Արցախյան հակամարտությանը և 2009թ. սկզբունքներին՝ ուղղակիորեն նշվում է, բացի տարածքային ամբողջականության սկզբունքից, նաև ուժի չկիրառման և ինքնորոշման իրավունքի սկզբունքների մասին, ապա 2020թ. փաստաթղթում ինքնորոշման իրավունքի մասին որևէ շեշտադրում առկա չէ: Թեև 2009-ի սկզբունքներն ու Հելսինկյան եզրափակիչ ակտը ներառում են տարածքային ամբողջականության, ինքնորոշման ու ուժի չկիրառման սկզբունքները, բայց

2020թ. փաստաթղթում ինքնորոշման եզրույթն ուղղակի չի հիշատակվում, և միայն հղում է տրվում համապատասխան փաստաթղթերին՝ մինչդեռ տարածքային ամբողջականության եզրույթն ավելի հաճախ է շեշտադրվում: Սա շատ վտանգավոր միտում է, եթե հաշվի առնենք, որ ԵՄ-ը սովորաբար նախկինում միշտ փորձել է կոնկրետ ԼՂ հակամարտության պարագայում հավասարակշռել տարածքային ամբողջականության և ինքնորոշման իրավունքների մասին հիշատակումները: 2017-ի բանաձևում ԼՂ հակամարտության համատեքստում հղում էր կատարվում կողմերից յուրաքանչյուրի հետ ԵՄ վավերացման ենթակա համաձայնագրերին՝ ՀԸԳՀ-ին և դեռ բանակցվող Ադրբեջան-ԵՄ համաձայնագրին: ՀԸԳՀ-ում Արցախյան հակամարտության վերաբերյալ կետը բավական բալանսավորված է, այնտեղ հստակ շեշտադրվում է ինքնորոշման իրավունքը: 2020-ի բանաձևում Արցախյան հակամարտությանը վերաբերող հատվածում ՀԸԳՀ-ին հղման բացակայությունը մտահոգիչ է, առավել ևս, որ Ադրբեջան-ԵՄ համաձայնագիրը դեռ հաստատված չէ, և դեռ չգիտենք, թե այնտեղ ինչ եզրույթներ օգտագործված կլինեն: Ինչպես նշվեց, ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում ինքնորոշման իրավունքի սկզբունքը ԵՄ-ը ամրագրել է նաև Հայաստանի հետ կնքված ՀԸԳՀ-ում, ու եթե այդ համաձայնագիրը արդեն վավերացված լիներ, հայկական կողմի համար ավելի հեշտ կլիներ պնդելը, որ ինքնորոշման սկզբունքը ներառվի ԼՂ հակամարտությանը վերաբերվող մեջբերումներում: Այս մասին փորձագետները բազմիցս բարձրաձայնել են՝ իշխանություններին կոչ անելով ավելի ակտիվացնել ՀԸԳՀ-ի վավերացման գործընթացի շուտափույթ ավարտին միտված քայլերը: Եթե 2017թ. փաստաթղթում կոչ է արվում անմիջապես դադարեցնել հայկական և ադրբեջանական զորքերի միջև ռազմական գործողությունները, ապա նոր փաստաթղթում այս մասով հայտարարությունն ավելի ընդհանրական է, նաև կոչ է արվում օտարերկրյա զորքերը անհապաղ դուրս բերել օկուպացված բոլոր տարածքներից, ինչը նույնպես կարող է Ադրբեջանի կողմից շահարկումների առիթ դառնալ: Այս տարվա փաստաթղթում նշվում է նաև «հարյուր-հազարավոր ներքին տեղահանված անձանց (IDP) իրենց հայրենիք վերադառնալու» թույլտվության մասին, որը ակնհայտորեն համընկնում է Ադրբեջանի քարոզչական ջանքերի հետ և վերջինս կփորձի ԵՄ այս կոչը պրոյեկտել ԼՂ հակամարտության վրա: 2017թ. փաստաթղթում կոչ է արվում Հայաստանի և Ադրբեջանի միջև «հաստատել վստահության ամրապնդման իրական միջոցներ», մինչդեռ նոր փաստաթղթում նշվում է «հակամարտությունների արդյունքում բաժանված համայնքներում մարդկանց

միջև շփումների անցկացման» մասին: Սա ևս մեկ անգամ ի ցույց է դնում Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները Հայաստանի միջազգային գործընկերների կողմից անտեսելու վերջին տարիների միտումը: Այս տարվա փաստաթղթում նաև ԼՂ հակամարտության կողմերին կոչ է արվում ինտենսիվացնել երկխոսությունը և զերծ մնալ ռազմաշունչ հռետորաբանությունից: Ուշագրավ է, որ թեև ռազմատենչ հռետորաբանությամբ հանդես է գալիս միայն Ադրբեջանը, իսկ հայկական կողմը խոսում է 3 ժողովրդների համար ընդունելի լուծման և հակառակորդի կառուցողական լինելու մասին, սակայն ռազմատենչ հռետորաբանությունից խուսափելու կոչը հասցեական չի արվում: Սա ցույց է տալիս, որ հայկական կողմի ավելի մեղմ և ոչ կոնֆլիկտային կեցվածք ընդունելու փորձը չի նպաստել, որ ԵՄ հայտարարությունները ավելի հասցեական լինեն:

Վերահաստատել ԵՄ հանձնառությունը ԱԼԳ երկրների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության նկատմամբ՝ նրանց միջազգայնորեն ճանաչված սահմաններում և սատարել այս սկզբունքների ամբողջական պարտադրմանն ուղղված նրանց ջանքերին. ընդգծել այս առումով անդամ պետությունների միասնության ու համերաշխության կարևորությունը:	Ապահովել, որ 2017-ի նոյեմբերյան **գագաթնաժողովի արդյունքները նաև անդրադառնան անվտանգության սպառնալիքներին և հակամարտություններին, որոնք ազդում են գործընկերների անկախության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, մարդու հիմնարար իրավունքների** և քաղաքական, սոցիալական, տնտեսական կայունության և ամբողջ տարածաշրջանի զարգացման վրա:

Մեկնաբանություն

2017թ. տեքստում անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքներին զուգահեռ հիշատակվում է նաև մարդու հիմնարար իրավունքների մասին: Փոխարենը 2020թ. փաստաթղթում առկա են մի շարք վտանգավոր ձևակերպումներ. մասնավորապես նշվում է, ԵՄ հանձնառության մասին «ԱԼԳ երկրների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության նկատմամբ՝ նրանց միջազգայնորեն ճանաչված սահմաններում», և որևէ անդրադարձ չի կատարվում մարդու հիմնարար իրավունքներին: Ավելին, նշվում է ԵՄ

հանձնառության մասին՝ «սպարել այս սկզբունքների ամբողջական պարտադրմանն ուղղված» ԱԼԳ երկրների ջանքերին, ինչպես նաև ընդգծվում է այս առումով ԵՄ անդամ պետությունների միասնությունն ու համերաշխությունը: Այսինքն՝ փաստաթուղթը ԵՄ երկրներին կոչ է անում սպարել օրինակ տարածքային ամբողջականության սկզբունքի ամբողջական պարտադրմանն ուղղված ԱԼԳ մասնակից Ադրբեջանի ջանքերին՝ վերջինիս միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Ընդ որում, այդ պարտադրմանն ուղղված ջանքերի ոչ մի սահմանափակման մասին չի նշվում, իսկ ուժի կիրառման և դրա սպառնալիքի արգելքի սկզբունքը, ինչպես արդեն նշվեց, փաստաթղթում ուղղակիորեն հիշատակվում էր այն հակամարտությունների համատեքստում, որտեղ մասնակից է ՌԴ-ը: Բացի այդ, փաստորեն կոչ է արվում, որ այս հարցում ԵՄ անդամ երկրները պետք է համերաշխություն և միասնություն դրսևորեն: Նման ձևակերպումները կարող են Ադրբեջանի համար ռազմական գործողությունների վերսկսման կարևոր շարժառիթ հանդիսանալ: Ընդ որում, այս ձևակերպումը ԵՄ պաշտոնական փաստաթղթում տեղ է գտնում այն ժամանակահատվածում, երբ Ադրբեջանը կտրուկ կոշտացրել է ռազմատենչ հռետորաբանությունը և վերջին մի քանի շաբաթների ընթացքում բազմաթիվ անգամ տարբեր մակարդակներում սպառնացել է ռազմական գործողությունների վերսկսման և «տարածքային ամբողջականության վերականգնման իր իրավունքի» իրացման մասին:

2. ԱԼԳ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Վերլուծության այս հատվածում անդրադառնանք այն մեջերումներին, որոնք վերաբերում են ԱԼԳ տարածաշրջանում ԵՄ ընդհանուր քաղաքականությանը և նպատակներին:

Մեջբերում 2020թ. փաստաթղթից	Մեջբերում 2017թ. փաստաթղթից
Հաստատել ԱԼԳ երկրների ինքնիշխան իրավունքը՝ **ազատորեն ընտրելու ԵՄ-ի հետ իրենց համագործակցության կամ ինտեգրման անհատական մակարդակը և մերժել այդ ընտրության վրա ցանկացած**	ԵՄ-ն ձգտում է իր գործընկերներին մոտեցնել... առաջարկելով արտոնյալ քաղաքական և տնտեսական հարաբերությունների հնարավորություն՝ **համաձայն յուրաքանչյուր գործընկեր**

արտաքին ճնշում. աջակցել այս գործընթացին՝ համաձայն «ավելին ավելի դիմաց» սկզբունքին:	**երկրի հավակնությունների աստիճանի**:
Մեկնաբանություն ***Ինչպես 2017թ. փաստաթղթում, այնպես էլ նոր փաստաթղթում ԵՄ-ը շեշտադրում է ԱԼԳ երկրների հետ հարաբերությունների մակարդակի նկատմամբ անհատական մոտեցման անհրաժեշտության մասին: Սակայն նոր փաստաթղթում ավելի ընդգծված է «Ավելին՝ ավելի դիմաց» սկզբունքը, ինչը վերահաստատում է այն տեսակետը, որ ԵՄ-ն առաջիկա տարիներին փորձելու է ավելի ընդգծված ձևով տարանջատել ԱԼԳ այն երկրների հետ հարաբերությունները, որոնք ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագիր են ստորագրել՝ այսպես կոչված «եռյակի» հետ: Միաժամանակ ուշագրավ է այդ ընտրության վրա արտաքին ճնշումը մերժելու շեշտադրումը, քանի որ սրանից կարելի է ենթադրել, որ ԵՄ-ը իր հերթին նույնպես պետք է խուսափի նման ճնշումից:***	
Իրականացնել ԵՄ-ի Կենտրոնական Ասիայի հավակնոտ ռազմավարությունը՝ ԱԼԳ երկրների ակտիվ ներգրավմամբ՝ որպես հուսալի գործընկերների, ովքեր անմիջական մուտք ունեն դեպի այս տարածաշրջան	Համանման մեջբերումը բացակայում է:
Մեկնաբանություն ***Ի տարբերություն 2017թ. փաստաթղթի՝ նոր առաջարկների մեջ կարևորվում է ԱԼԳ երկրների դերը ԵՄ Կենտրոնական Ասիայի ռազմավարության իրականացման հարցում: Սա մի կողմից վկայում է հետխորհրդային տարածքում իր դիրքերն ավելի ամրապնդելու ԵՄ ծրագրերի մասին, մյուս կողմից ուշագրավ է, որ ԱԼԳ երկրներին այդ հարցում «կամրջի» դեր է վերապահվում: Այստեղ ճիշտ քաղաքականություն իրականացնելու դեպքում Հայաստանի Հանրապետությունը կարող է առանցքային դերակատարություն ստանձնել, քանի որ հանդիսանում է ԵԱՏՄ անդամ և ԵՄ-ի հետ ունենալով ՀԸԳՀ-ը՝ կարող է յուրահատուկ կապող օղակ դառնալ ԵԱՏՄ անդամ Կենտրոնական Ասիայի երկրների և ԵՄ-ի միջև: Սակայն հարկավոր է ճիշտ հաշվարկել նաև տարածաշրջանի մյուս դերակատարների շահերը և***	

խուսափել Կենտրոնական Ասիայում ԵՄ-ի և ՌԴ-ի, ինչպես նաև ՉԺՀ-ի միջև հնարավոր մրցակցությանը որևէ մասնակցություն ունենալու հեռանկարից:	
Գիտակցել ԵՄ և ԱԼԳ երկրների միջև անվտանգային փոխկախվածության բարձրացումը, ինչպես նաև անվտանգության, կայունության և խաղաղության կարևորությունը ԱԼԳ երկրների հետագա զարգացման համար, **հաշվի առնելով, որ վերջին տարիներին նրանք ենթարկվում են երրորդ երկրների հետաքրքրությանն ու հավակնություններին, ինչպիսիք են Չինաստանը, Թուրքիան կամ Ծոցի որոշ երկրները, որոնք ոչ միշտ են կիսում ԵՄ արժեքներն ու շահերը**: Հետևաբար, (պետք է) **խթանել ԵՄ-ԱԼԳ համագործակցությունը անվտանգության և պաշտպանության ոլորտում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով տարածաշրջանային հակամարտությունների խաղաղ կարգավորման** և նոր տեսակի մարտահրավերների կանխարգելման և լուծման վրա, ինչպիսիք են հիբրիդային սպառնալիքները, կիբեռհարձակումները, ներառյալ՝ ընտրությունների կիբեռ-միջամտությունը: Գիտակցել, որ ԵՄ-ի ներկայության որևէ բացակայություն կամ անգործություն՝ կապված ԱԼԳ գործընկերների հետ, տարածք կազատի այլ գլոբալ խաղացողների ներգրավման համար: **Բարձրացնել**	Համանման մեջբերումը բացակայում է

համագործակցության մակարդակը կամ համախոհ ժողովրդավարական դաշնակիցների և միջազգային դերակատարների հետ ստեղծել ֆորում՝ ԱԼԳ տարածաշրջանում երրորդ երկրների ուժերի բացասական ազդեցությունը մեղմելու և դրանց հակազդելու համար:	

Մեկնաբանություն

Ուշագրավ է, որ ի տարբերություն 2017թ. փաստաթղթի՝ այս տարվա փաստաթղթում հատկապես մեծ ուշադրություն է դարձվում ԱԼԳ տարածաշրջանում ՌԴ-ից զատ՝ այլ դերակատարների ազդեցությունը զսպելու հանգամանքին: Նշվում է Թուրքիայի, Ծոցի երկրների և ՉԺՀ-ի հնարավոր բացասական ազդեցության մասին: ԵՄ այս մտավախությունը պատահական չէ, այն նախ և առաջ պայմանավորված է տարածաշրջանում ՉԺՀ դերակատարության ավելացմամբ, ինչպես նաև ԵՄ-ի համար ՌԴ-Թուրքիա համագործակցության հնարավոր բացասական հետևանքներով: ԱԼԳ երկրները, այդ թվում՝ Հարավային Կովկասի երկրները հատկապես մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ՉԺՀ նախաձեռնած «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի նկատմամբ և ձգտում են ակտիվացնել Պեկինի հետ շփումները: Ընդ որում, պատահական չէ այս մտահոգությունների շեշտադրումը, եթե հաշվի առնենք, որ Կորոնավիրուսի ճգնաժամի հետևանքով, ըստ մի շարք միջազգային փորձագետների գնահատականների, Չինաստանի ազդեցությունն ավելի է մեծանալու Եվրասիական տարածաշրջանում, այդ թվում՝ Արևելյան Եվրոպայում: Տարածաշրջանում ԵՄ ազդեցության հիմնական գործիքը, ինչպես նշվեց, «Ավելին՝ ավելիի դիմաց» սկզբունքի կիրառումն է, երբ Բրյուսելը տարբեր տեսակի ֆինանսական և տնտեսական աջակցության ծրագրերը, ներդրումները կապում է քաղաքական ու այլ բարեփոխումների հետ՝ դրանց միջոցով մեծացնելով իր ազդեցությունը ԱԼԳ տարբեր երկրներում: Փոխարենը ՉԺՀ-ը կարող է հանդես գալ որպես հուսալի այլընտրանք, որը կարող է ֆինանսական խոշոր միջոցներ ներդնել տարածաշրջանում՝ առանց հավելյալ պարտավորությունների և պայմանների, ինչը կսահմանափակի ԵՄ հնարավորությունները՝ հատկապես այն երկրներում, որոնք հակված չեն հանուն ԵՄ աջակցության և ներդրումների լուրջ քաղաքական բարեփոխումներ իրականացնելու հարցում: Այս առումով Հայաստանի համար նույնպես կարևոր

է խուսափել ԵՄ-ՉԺՀ մրցակցության առանցքում հայտնվելու հեռանկարից և փորձել հավասարակշռել ուժային երկու կենտրոնների հետ հարաբերությունները՝ շեշտը դնելով ՌԴ-ի հետ դաշնակցային հարաբերությունների առկայության հանգամանքի վրա:	
Ընդունել ԵՄ մարդու իրավունքների խախտումների դեմ պատժամիջոցների մեխանիզմ կամ ԵՄ «Մագնիտսկու ակտ», որը կիրառելի է այն մարդկանց կամ խմբերի համար, որոնք հայտնի են մարդու իրավունքների հիմնարար ազատությունների ոտնահարմամբ՝ մասնավորապես ներգրավելով **քաղաքացիական հասարակության կամ ընդդիմության ակտիվիստների ու լրագրողների ձերբակալություններին, առևանգումներին, ծեծին և խաղաղ բողոքի ցույցերի բռնի ճնշմանը, ինչպես նաև ներգրավված են ԱԼԳ երկրներում բարձր մակարդակի կոռուպցիոն գործերում:**	**Մասնավորապես շեշտել, որ ոչ մի համապարփակ համաձայնագիր չի վավերացվի մի երկրի հետ, որը չի հարգում ԵՄ արժեքները, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից որոշումների չկատարման և մարդու իրավունքների պաշտպանների, ՀԿ-ների, լրագրողների և այլ անձանց նկատմամբ ոտնձգությունների, ահաբեկման և հետապնդումների միջոցով:** Շեշտել նաև, որ առանց վիզայի ռեժիմի վերաբերյալ նոր երկխոսության սկսվելու և ավարտելու համար անհրաժեշտ են հստակ ուղենիշեր:
Մեկնաբանություն ***Եթե 2017թ. տեքստում որպես մարդու իրավունքների խախտման համար ԵՄ կողմից զսպող միջոցառումներ ներկայացվում էին համաձայնագրերի վավերացումից ու վիզաների ազատականացումից հրաժարվելը, ապա այժմ առաջարկվում է ուղղակի պատժամիջոցների կիրառում: Սա նշանակում է, որ ԵՄ-ն փորձելու է ավելի ակտիվ ներգրավվածություն ունենալ ԱԼԳ երկրներում մարդու իրավունքներին վերաբերող հարցերում, սակայն ժամանակը ցույց կտա, թե որքանով է այդ ներգրավվածությունը լինելու օբյեկտիվ և ապաքաղաքականացված:***	

3. ՎԻԶԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Մեջբերում 2020թ. փաստաթղթից	Մեջբերում 2017թ. փաստաթղթից
Աջակցել ԵՄ-ի և ԱԼԳ երկրների, ինչպես նաև հենց ԱԼԳ երկրների միջև աշխատանքային շարժունակության բարձրացմանը՝ խիստ կենտրոնանալով գործընթացի օրինականության և կայունության վրա, թույլ տալով հմտությունների և փորձի փոխանակում և խուսափել ուղեղների արտահոսքից և տեղական աշխատուժի կրճատումից:	Պարտավորվել համատեղ աշխատել ԵՄ-ի և գործընկեր երկրների միջև շարժունակության բարձրացման ուղղությամբ... **մեկնարկել վիզայի ազատականացման երկխոսությունը Հայաստանի հետ**, խրախուսել Ադրբեջանի կողմից առաջընթացը վիզաների դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերի (VFA-ՀՀ) իրականացման գործում՝ հետագայում վիզային երկխոսություն սկսելու նպատակով... **եթե այդ երկրները զգալի առաջընթաց ունենան հիմնարար արժեքների ոլորտում և բավարարեն վիզաների ազատականացման գործողությունների ծրագրերում սահմանված ճշգրիտ պայմաններին:**
Մեկնաբանություն ***2017թ. փաստաթղթում կոչ է արվում «մեկնարկել վիզայի ազատականացման երկխոսությունը Հայաստանի հետ»՝ այն պայմանավորելով հիմնարար արժեքների ոլորտում առաջընթացի և վիզաների ազատականացման գործողությունների ծրագրերում սահմանված ճշգրիտ պայմանների բավարարման հետ: Ընդ որում, Հայաստանի պարագայում նշվում է երկխոսության մեկնարկի մասին, իսկ Ադրբեջանի պարագայում նշվում է այդ երկխոսությունը հետագայում սկսելու հնարավորության մասին՝ որոշակի պայմանների բավարարման դեպքում: 3 տարի անց դեռ Հայաստանի հետ վիզաների ազատականացման երկխոսությունը չի մեկնարկել, մինչդեռ նախկինում Հայաստանի նախորդ իշխանությունների կողմից նշվում էր այն մինչև 2020թ. ավարտին հասցնելու մտադրության մասին: Իսկ ահա նոր փաստաթղթում առհասարակ բացակայում է Հայաստանի հետ վիզաների***	

ազատականացման երկխոսության մեկնարկի մասին առանձին շեշտադրումը, ինչը վկայում է այն մասին, որ այդ երկխոսության մեկնարկի հարցը դուրս է մղվում ԵՄ առաջնահերթությունների շարքից: Տեքստում ԱԼԳ անդամ՝ Ասոցացման համաձայնագիրը չստորագրած երկրների հետ շարժունակության բարձրացման մասին տրված են ընդհանուր բնորոշումներ, ինչը ցույց է տալիս, որ վիզաների ազատականացման հարցում Հայաստանը այժմ ԵՄ կողմից դիտարկվում է նույն հարթության վրա, ինչ Ադրբեջանն ու Բելառուսը:

4. ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Մեջբերում 2020թ. փաստաթղթից	Մեջբերում 2017թ. փաստաթղթից
Թեմային անդրադարձը բացակայում է՝	հաշվի առնելով իր ընդունած բանաձևերը, մասնավորապես 2017 թվականի հունիսի 15-ի **Աֆղան Մուխթարլիի գործով և Ադրբեջանում լրատվամիջոցների հետ կապված իրավիճակի վերաբերյալ բանաձևերը:**
Մեկնաբանություն ***2017թ. փաստաթղթում հիշատակվում է Ադրբեջանում ընդդիմադիր գործիչների և ՀԼՄ-ների նկատմամբ հալածանքների հանգամանքները, ինչը մի կողմից հայկական խորհրդարանական դիվանագիտության ակտիվ ջանքերի արդյունք էր, մյուս կողմից Ադրբեջանի նկատմամբ ԵՄ ավելի կոշտ դիրքորոշման ապացույց: Նոր փաստաթղթում հակաադրբեջանական ձևակերպումները գրեթե բացակայում են, որևէ անդրադարձ չկա այդ երկրում ընդդիմադիրների նկատմամբ բռնություններին և շարունակվող ընտրակեղծիքներին, այդ թվում՝ այս տարի տեղի ունեցած ընտրությունների ժամանակ: Սա վկայում է այն մասին, որ փաստաթղթի մշակման փուլում Ադրբեջանը ավելի ակտիվ դիվանագիտական և լոբբիստական աշխատանք է տարել եվրոպացի գործընկերների հետ, քան Հայաստանը: Արդյունքում ստացել է իր համար ավելի ընդունելի ձևակերպումներ ոչ մայն հակամարտությունների կարգավորման և ԼՂ հակամարտության, այլև Ադրբեջանին տրված այլ գնահատականների մասով:***	

Հաշվի առնելով ԵՄ-ի և Ադրբեջանի միջև գործընկերության գերակայությունները, որոնք հաստատվել են համագործակցության խորհրդի կողմից 2018 թվականի սեպտեմբերի 28-ին: **Քանի որ 2017 թվականից Ադրբեջանը բանակցություններ է վարում ԵՄ-ի հետ նոր համապարփակ համաձայնագրի շուրջ, որը կփոխարինի 1999 թվականի Գործընկերության և համագործակցության համաձայնագրին:**	Նախորդ գագաթնաժողովից ի վեր նշանակալի առաջընթաց է գրանցվել, մասնավորապես... **Ադրբեջանի հետ նոր համապարփակ համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկը:**
Մեկնաբանություն ***Եթե նախորդ փաստաթղթում նշվում է Ադրբեջանի հետ նոր համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկի մասին, ապա նոր փաստաթղթում նշվում է այդ բանակցությունների ընթացքի մասին, սակայն որևէ ակնարկ չկա, թե դրանք որ փուլում են գտնվում: Մինչ այդ շատ փորձագետներ կանխատեսում էին, որ այդ համաձայնագիրը հավանաբար կստորագրվի առաջիկա գագաթնաժողովի ընթացքում, մինչդեռ դա տեղի չունեցավ: Ինչևէ, հաշվի առնելով փաստաթղթում ԼՂ հակամարտությանը վերաբերող մի շարք ոչ հայանպաստ ձևակերպումների առկայությունը՝ կարելի է պատկերացնել, թե ինչպիսի ձևակերպումներ կարող են լինել ԵՄ-Ադրբեջան նոր փաստաթղթում: Հարկավոր է ակտիվ աշխատանք տանել, որպեսզի դրանք չհակասեն ՀԸԳՀ-ում տեղ գտած ձևակերպումներին, իսկ այդ աշխատանքը ավելի արդյունավետ կլինի, եթե արագորեն ավարտին հասցվի ՀԸԳՀ-ի վավերացման գործընթացը և այն վերջնական իրավական ուժ ստանա:***	
Ճանաչել Ադրբեջանի կարևոր դերը ԵՄ-ին էներգիայի մատակարարման դիվերսիֆիկացիայի հարցում, ինչպես նաև Ուկրաինայի հաջողությունը գազի փոխանցման համակարգի բաժանման	Համանման մեջբերումը բացակայում է:

գործընթացում և աջակցել էներգետիկ անկախությանը ու մատակարարման դիվերսիֆիկացման ջանքերին ԱԼԳ այլ երկրներում:	

Մեկնաբանություն

Ի տարբերություն նախորդ փաստաթղթի՝ այս անգամ առանձին անդրադարձ է կատարվում և կարևորվում է Ադրբեջանի դերը ԵՄ էներգետիկայի մատակարարաման դիվերսիֆիկացիայի հարցում: Սա մեծ մասամբ պայմանավորված է Հարավային գազային միջանցքի շինարարության մոտալուտ ավարտի և դեպի ԵՄ ադրբեջանական գազի մատակարարման ծավալների աճի հետ: ԵՄ-ի հետ Ադրբեջանի էներգետիկ համագործակցությունը վերջինիս եվրոպական քաղաքականության ուղղությամբ լրացուցիչ ազդեցության լծակներ է տալիս, այդ թվում՝ ԱԼԳ շրջանակներում:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Մեջբերում 2020թ. փաստաթղթից	Մեջբերում 2017թ. փաստաթղթից
Քանի որ Հայաստանը հանդիսանում է Ռուսաստանի կողմից առաջնորդվող տնտեսական և ռազմական տարածաշրջանային ինտեգրացիոն կառույցների մասնակից (Եվրասիական Տնտեսական Միության և Հավաքական Անվտանգության պայմանագրի կազմակերպության) և ԵՄ-ի հետ ստորագրել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:	Նախորդ գագաթնաժողովից ի վեր նշանակալի առաջընթաց է գրանցվել, մասնավորապես... Հայաստանի հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շուրջ բանակցությունների ավարտը (որը **օրինակ է ծառայում, թե ինչպես կարելի է համատեղել անդամակցությունը Եվրասիական Տնտեսական Միությանը և մասնակցությունը ԵՄ հարևանության ռազմավարությանը)**

Մեկնաբանություն

2017թ. փաստաթղթում Հայաստանը ներկայացվում է որպես դրական օրինակ, թե ինչպես կարելի է համատեղել անդամակցությունը ԵԱՏՄ-ին և

մասնակցությունը ԵՄ հարևանության ծրագրին, մինչդեռ նոր փաստաթղթում ուղղակի հիշատակվում է ՀՀ ԵԱՏՄ և ՀԱՊԿ անդամակցության փաստը: Կարելի է ենթադրել, որ որպես ԵԱՏՄ-ի անդամ և ԵՄ-ի հետ ՀԸԳՀ ստորագրած երկիր Հայաստանը այս ընթացքում չի կարողացել լիովին օգտվել այդ կարգավիճակի ընձեռած բոլոր առավելություններից, ուստի նոր փաստաթղթում բացակայում է դրա հետ կապված այն խանդավառությունը, որ առկա էր 2017թ., և Հայաստանը չի ներկայացվում որպես դրական օրինակ ԵԱՏՄ անդամ մյուս երկրների համար:	
Հաշվի առնելով 2015 թվականի ապրիլի 15-ի բանաձևը՝ Հայոց ցեղասպանության հարյուրամյակի կապակցությամբ՝	Համանման մեջբերումը բացակայում է:
Մեկնաբանություն ***Փաստաթղթում այս բանաձևի հիշատակումը կարևոր է, հատկապես եթե հաշվի առնենք, որ վերջին շրջանում ԵՄ պաշտոնյաները՝ առաջին հերթին ՀՀ-ում ԵՄ ներկայացուցիչը ակնհայտորեն խուսափում է Հայոց ցեղասպանություն եզրույթի օգտագործումից՝ ի հեճուկս ԵՄ պաշտոնական դիրքորոշման: Այստեղ կարող էին մեծ դերակատարություն ունենալ ՀՅԴ Հայ դատի գրասենյակի գործադրած ջանքերն ու լոբբիստական աշխատանքը: Միաժամանակ, հարկավոր է ավելի հետևողական աշխատանք իրականացնել՝ նմանօրինակ փաստաթղթերում Հայոց ցեղասպանությունը և Թուրքիայի ժխտողականությունը դատապարտող ավելի հայանպաստ ձևակերպումներ ընդգրկելու նպատակով:***	

6. ԱՅԼ ՈՒՇԱԳՐԱՎ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Մեջբերում 2020թ. փաստաթղթից	Մեջբերում 2017թ. փաստաթղթից
Դատապարտել իշխանությունների կողմից համաճարակի դեմ պայքարի միջոցների չարաշահումը՝ որպես քաղաքական ընդդիմության, քաղաքացիական հասարակության և	Համանման մեջբերումը բացակայում է:

լրատվամիջոցներին լռեցնելու միջոց՝ սահմանափակելով վերջիններիս օրինական իրավունքները	

Մեկնաբանություն

Փաստաթղթում տեղ գտած այս ձևակերպումը ուշագրավ է այն տեսանկյունից, որ նման չարաշահումների մասին միջազգային փորձագետները բարձրաձայնել են ոչ միայն ԱԼԳ անդամ որոշ երկրների մասով, այլև Արևելյան Եվրոպայի ԵՄ անդամ մի քանի երկրների, մասնավորապես՝ Հունգարիայի, Լեհաստանի մասով: Միաժամանակ, նմանօրինակ քննադատությունից չեն խուսափել նաև Հայաստանի իշխանությունները, երբ արտակարգ դրության սկզբնական շրջանում զգալիորեն սահմանափակել էին ՀԼՄ-ների իրավունքները: Ավելին, Հայաստանում հերթական անգամ արտակարգ դրության երկարաձգումը՝ հակառակ կորոնավիրուսի դեմ պայքարի անարդյունավետությանը, մի շարք փորձագետների համոզմամբ քաղաքական նպատակ է հետապնդում, մասնավորապես՝ կապված սահմանադրական հանրաքվեի և հասարակական հնարավոր դժգոհությունը սահմանափակելու ցանկության հետ: ԵՄ փաստաթղթում հատուկ անդրադարձը այս հարցին գալիս է վկայելու, որ ԱԼԳ երկրներում նմանատիպ չարաշահումները չեն վրիպելու ԵՄ գործընկերների ուշադրությունից:

ԱԼԳ երկրներին տրամադրել ավելի մեծ ֆինանսական օգնություն. ապահովել, որ այդպիսի օգնությունը համապատասխանեցվի ԱԼԳ-ի առանձին երկրների հատուկ կարիքներին՝ իրականացվի պատվիրակված գործողությունների միջոցով Եվրախորհրդարանի ղեկավարության ներքո և օգտագործվի ԱԼԳ ծրագրի շրջանակներում գործողություններ իրականացնելու համար: **Ավելի արագ արձագանքել ԱԼԳ երկրներում օրենքի գերակայության և ժողովրդավարական**	Ողջունել հանձնաժողովի առաջարկները՝ **գործընկերներին մակրոֆինանսական օգնություն տրամադրելու հարցում (MFA), մինչդեռ առաջարկություններին կցելով խիստ և արդյունավետ պայմանականություններ, մասնավորապես՝ օրենքի գերակայության պահպանումը (ներառյալ անկախ դատական համակարգը և բազմակուսակցական խորհրդարանական համակարգը), լավ կառավարման ապահովումը (ներառյալ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը), մարդու**

հաշվետվողականության վատթարացմանը և կիրառել խելացի պայմանականություն, ներառյալ՝ կապելով մակրոֆինանսական օգնության տրամադրումը ժողովրդավարացման և բարեփոխումների հետ, այդպիսով կանխելով հետագա սողանցքների օգտագործումը գործընկեր կառավարությունների կողմից: Ստեղծել պայմաններ, որպեսզի հնարավոր լինի ԱԼԳ այն երկրում, որտեղ կենտրոնական իշխանությունները չեն կատարում իրենց հանձնառությունները, աջակցել տեղական իշխանություններին կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:	**իրավունքների և լրատվամիջոցների ազատության պաշտպանությունը:**
Մեկնաբանություն ***Նոր փաստաթղթում մի կողմից ԵՄ-ն առաջարկում է մեծացնել ԱԼԳ երկրներին տրվող ֆինանսական աջակցության ծավալները, մյուս կողմից՝ ավելի խստացնել դրա տրամադրման համար անհրաժեշտ պայմանականությունները: Ուշագրավ է, որ 2017թ. փաստաթղթում մակրոֆինանսական օգնություն տրամադրումը (MFA) կապվում էր շահառու երկրում օրենքի գերակայության պահպանման (ներառյալ անկախ դատական համակարգը և բազմակուսակցական խորհրդարանական համակարգը), լավ կառավարման ապահովման (կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը), մարդու իրավունքների և լրատվամիջոցների ազատության պաշտպանության հետ: Կորոնավիրուսի համաճարակի համատեքստում ԱԼԳ մի շարք երկրներ, այդ թվում՝ Վրաստանը, Ուկրաինան, Մոլդովան ԵՄ-ից այս գործիքի շրջանակներում մակրոֆինանսական աջակցություն ստացան, մինչդեռ Հայաստանը դուրս մնաց ծրագրից: Հարկ է հիշել, որ նախկինում, մասնավորապես՝ 2008թ. ֆինանսական ճգնաժամից հետո, Հայաստանը օգտվել է մակրոֆինանսական աջակցության այս ծրագրից, որը բավական լավ պայմաններ ունի:***	

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, Եվրոպական Խորհրդարանի ԱԼԳ գագաթնաժողովին ընդառաջ հանձնարարականների վերաբերյալ 2017 և 2020 թվականների փաստաթղթերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք հարցերի վերաբերյալ ԵՄ մոտեցումները 2017թ. փաստաթղթի համեմատ բացասական փոփոխությունների են ենթարկվել: Հատկապես մտահոգիչ են նոր փաստաթղթում ԱԼԳ տարածքում առկա հակամարտությունների՝ նախ և առաջ Արցախյան հակամարտության մասով տրված գնահատականները:

Հունիսի 19-ին հաստատված փաստաթղթում հայանպաստ ձևակերպումների բացակայությունը, ինչպես նաև Ադրբեջանի շահերին համահունչ մի շարք ձևակերպումների առկայությունը հերթական անգամ ի ցույց են դնում Հայաստանի խորհրդարանական դիվանագիտության առկա խնդիրները: Այս փաստաթուղթը գալիս է լրացնելու վերջին շրջանում ԵՄ մի շարք պաշտոնյաների ոչ հայանպաստ հայտարարությունները՝ հատկապես Արցախյան հակամարտության մասով:

Ուշագրավ է, որ այս փաստաթուղթը շրջանառության մեջ էր դրվել բավականին վաղուց, և փորձագետների կողմից բազմիցս բարձրաձայնվել էր դրանում առկա վտանգավոր ձևակերպումների մասին: Այսինքն՝ Հայաստանի իշխանությունները, ինչպես նաև խորհրդարանական դիվանագիտության պատասխանատուները նախքան փաստաթղթի քվեարկությունը բավական ժամանակ ունեին այս ուղղությամբ համապատասխան աշխատանք կատարելու և Հայաստանի շահերին ավելի համահունչ փաստաթուղթ ստանալու ուղղությամբ:

Թեև այս փաստաթուղթը ի սկզբանե ներկայացված նախնական տարբերակի համեմատ, այնուամենայնիվ, որոշակի փոփոխությունների ենթարկվել է, և հաջողվել է չեզոքացնել Հայաստանի համար ավելի անբարենպաստ որոշ ձևակերպումներ, այդ թվում՝ Հայաստանի արտախորհրդարանական քաղաքական ուժերի և որոշ հայկական կազմակերպությունների ջանքերի շնորհիվ, սակայն այն ակնհայտորեն նահանջ է 2017թ. փաստաթղթի համեմատ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*